

Հավելված 10. Հայտի հետ կապված հիմնական ռիսկերը

Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ⁴¹	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
Ֆինանսական միջոցների անբավարարություն	2	Դիվանագիտական դպրոցի դասախոսները հրավիրվում են արտերկրից: Համատարած թանկացումների պատճառով հրավիրվող դասախոսները ֆինանսապես արդարացված չեն համարում այլ երկիր ճամփորդելը, եթե նրանց վարձավճարները չեն արտացոլում իրենց երկրում առկա գնաճը: Սա կարող է ինչ-որ պահի վտանգել դպրոցի ծրագրերի իրականացումը, քանի որ առանցքային առարկաների՝ պահանջվող որակավորմամբ տեղացի մասնագետներ գրեթե առկա չեն: Կանխատեսելի չեն նաև ավիափոխադրումների և հյուրանոցային ծառայությունների մատուցման գների փոփոխությունները:	Դրույքների կանոնավոր վերանայում՝ սղաճին համապատասխան:
	4	Դիվանագիտական դպրոցի դասախոսները վարձատրվում են արտարժույթով պայմանավորված դրույքների համաձայն, իսկ ֆինանսավորումը բյուջեից ստացվում է ՀՀ դրամով: Դրամի փոխարժեքի փոփոխությունները նույնպես կարող են հանգեցնել դրամական միջոցների անբավարարության:	Ըստ հնարավորության հարկավոր է ներառել փոխարժեքի հնարավոր տատանման կանխատեսումները հատկացվող միջոցներում:
	2	Դիվանագիտական դպրոցի աշխատակիցների հոսունությունը կանխելու համար ցանկալի է իրականացնել նրանց վարձատրության գնաճն արտացոլող կանոնավոր ինդեքսավորում:	Իրականացնել ԴԴ աշխատակիցների վարձատրության գնաճն արտացոլող կանոնավոր ինդեքսավորում: